

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն, Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Պատկերները բաց է առաջադրում 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարությունները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջը կարժեհայ վեճ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղորձ յայտնելու այդ մասին խմբագրությունը, որպես զի լրագրի առաքումը չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցանկացողները վճարում են Մէկ ռուբլի:

Ապագիկ բաժանորդագրություն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կարծիքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնագիտական պեղումները. Դրամատիկական ընկերություններ ժողովը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Քաղաքական տեսություն.—ՀԵՌԱՊԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պոռոյս մը Ս. Լուի աշխարհահանդեսին մէջ:

Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ե Ր

Մի շարք յօդուածներով մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին Պօրտ-Արտուրի դերը և նրա շրջակայքի հետ: Որպէս զի զաղափար տուած լինենք բերդի պաշտպանութեան ներկայ պայմանների մասին, նպատակայարմար ենք համարում առաջ բերել քաղաքացիներ Շարլ Մալօի յօդուածից, որ հրատարակվել է «Journal des Débats» թերթում և արտատպվել «Пр. В.» լրագրում:

Մալօի կարծիքով Պօրտ-Արտուրի պաշտպանութեան գլխաւոր զեկալար գնես-բալ Ստեսսելը բերդի պաշտպանութեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՏՈՅ ՍԸ Ս. ԼՈՒԻՒ ԱՇԽԱՐՀԱՆՈՒՄԻՆ ՄԵՋ (Նամակ Ամբերկայից)

Ընտանի կենդանիներու բաժինը բաղկացած է կարգ մը փոքրիկ շէնքերէ, որոնց ամբողջութեանը համար ծախս եղած է 100,000 զօլլար: Այս բաժնին մէջ ցոյց դրուած են հանգիւններ և ագարակի կենդանիներ իրենց զանազանութիւններով, ձիերէ, արջառնէրէ, եղնիքէ, այծերէ, խոզերէ զատ ցոյց դրուած են նաև շուններու, կատուներու, նապաստակներու, թռչուններու զանազան տեսակներ: Այս յիշեալ ընտանի կենդանիներու համար միջազգային մրցում մը տեղի պիտի ունենայ, որու համար յատկացված է արգէն 250,000 զօլլար. այս գումարը իբրև մրցանակ պիտի բաշխուի զանազան բաժնիներու համար:

Անտառական, ձուկերու և որսի կենդանիներու պալատը երկու որոշ մասերէ բաղկացած է. ամբողջութեան մեծութիւնն է 600-ով 300 ոտք, ծախսված է 170,000 զօլլար:

Անտառային բաժնին մէջ ցոյց դրուած են անտառագործութեան զանազան կերպերը, անտառ մշակելու եղանակները, անտառի արտադրութիւնները, անոր յառաջ բերած արդիւնքները, ճարտարագործութիւններու և անոնց յառաջդիմութեանց հետ ունեցած առնչութիւնը: Այս բաժինը գիտական և անտեսական իր երկու կողմերով ներկայացված է. ինչ ցոյց դրուած են սերմերու և բոյսերու հաւաքածոյներ, բարեխառն և այլեքեալ զօտիսներու անտառային արտադրութիւններ, ծառերու մշակութեան համար հանգրձաններ, զանոնք մեծցնելու և պահպանելու համար կերպեր: Ցոյց տուած են նաև անտառներու տես-

գործը կազմակերպել և խելացի սկզբունքներով և համաձայն նոր հասկացողութիւններին: Առաջվայ ժամանակները ընդունված էր, որ բերդապահ գործը փակվում էր բերդի պարիսպներին մէջ և դիմադրում էր պաշարմանը: Իսկ Պօրտ-Արտուրում ներկայումս գործադրվում է այն կարգը, որին հետևում էր Ֆրանսապրուսական պատերազմի ժամանակ գրեթէ անպակաս Դանֆօրը, երբ պաշտպանում էր Բելֆօրը: Այդ կարգը հետևեալն է. բերդ պաշտպանողները առաջ դիրքեր են բռնում բերդից դուրս, մարտկոցները առաջ, որքան որ այդ թիւղ են տալիս տեղական պայմանները և ունեցած զօրքի հանգամանքները: Այդպիսի նախապատրաստական գծեր ծրագրում են երկու երեք տեղում: Այդ գծերով անկարելի է կանգնեցնել յարձակողներին, բայց կարելի է թուլացնել նրանց և երկար ժամանակով յետաձգել տալ բերդի վճռական ուժակոծութիւնները: Այդ տեսակէտից պէտք է նայել և Յիւնչօուի մօտ եղած պատերազմի վրա, որտեղ Ստեսսելը փորձեց դիմադրել հապոնական առաջխաղացութեանը: Սակայն Օկուի եպոստական զօրքերը, աշակցութիւն ստանալով ծովապետ Տօգօի նաւատորմից, բացեցին ճանապարհ առաջ ընթանալու համար:

Եթէ հապոնացիների իւրաքանչիւր քաղաքական տեղի ունենալին այնպիսի խոչընդոտներ, որպիսիք հանդէս եկան Յիւնչօուի մօտ, այն ժամանակ հապոնացիները առաջ վտանգ է բացվում բաւականաչափ ոյժ չունենալու վճռական քայլերնրու: Եպոստականները, ունենալով 350,000 հոգի զօրք, երեք ու կէս ամսվայ ընթացքում շատ կորուստ են ունեցել և ցրվել են իրանց զօրքը բնադարձակ տարածութեան վրա: Այժմ և հապոնացիները պէտք է զբաղվեն լրացնելով իրանց զօրքերի շարքերը: Եպոստական անկասկած

զեկագրութիւններ, աշխարհագրական բաժանումներ, անտառային գործիքներ, մեքենաներ, փոքրիկ և տնկելու կերպեր, քարտէշներ, յատակագիծեր, և անտառաբանութեան վերաբերեալ գրականութիւն մը:

Ցոյց դրուած են նաև յարգի փայտերու, շինութեան փայտերու և փառելու փայտերու տարբեր տեսակներ: Անտառաբանական բաժնին համար մասնակցած են 24 օտար կառավարութիւններ:

Շուններու և որսի կենդանիներու բաժնին մէջ ցոյց դրուած են ձուկերու և վայրենի կենդանիներու հաւաքածոյներ իրենց զանազան տեսակներով, մորթերու, մուշտակներու, փրկողների, յարգի ոսկորներու, խեցիներու, ձուկերու տեսակներ: Ձուկերու տեսակներու մշակութեան և անոնց յատուկ հիւանդութիւնները զարմանելու միջոցներ, ձկնորսութեան և որսորդութեան զանազան կերպեր ու միջոցներ, կազմածներ ու գործիքներ:

Հանքերու և մետաղներու շէնքին մեծութիւնն է 750-ով 525 ոտք, ծախսուած է 498,000 զօլլար: Այս շէնքի ճարտարապետական ոճը բոլորովին տարբեր է միւս շէնքերէն. մեծ դուռ բոլորովին եզրադասական է. անոր երկու կողմերէն բարձրացած են երկու անագին սիւններ, իսկ շէնքին ֆնացած մասը արդի ճարտարապետական ոճով տեսակ մը յարմարեցում է, որոյ ընդհանուր յատկորոշութիւնն է պարզութիւնը:

Այս բաժնին մէջ ցոյց դրուած են զանազան հանքերու, քարերու օրինակներ, անոնց օգտակարութիւնը: հանքագործութեան մեթոդներ, քարտէշներ և լուսանկարներ, մետաղագործութեան ու հանքագործութեան վերաբերեալ գրականութիւն մը, հանքերու բարդաւածման մեթոդներ, գործիքներ ու կազմածներ: Հանքերու շահագործման համար ցոյց դրուած են նաև արուեստական կերպով շինուած ստորերկրեայ հորեր ու ճանապարհներ, խորունկ

չէ կարող այնքան պատրաստ զօրք հանդէս բերել, որքան Ռուսաստանը և եթէ շարունակէ անհաշիւ կերպով կրակի մէջ նետել իր զինուորներին, կարող է անհապաստ դրութիւն ստեղծել իր համար հակառակորդի դիմաց, որ անտեսում է իր ոյժերը:

Ուշագրութեան արժանի է Րէյտերի գործակալութեան երկու օր առաջ տուած հաղորդագրութիւնը այն բանի մասին՝ թէ Պօրտ-Արտուրը շրջապատված է ներկայումս ամբարտակներով, որոնք 15 ոտնաչափ (6¹/₂ արշին) հաստութիւն ունեն, թէ շատ տեղերում գրված են թնդանօթներ, իսկ հետաւոր տեղերը լաւ պաշտպանված են բազմաթիւ ականներով:

Հետազոտողները յայտնում են, որ Պօրտ-Արտուրը շրջանում տեղի ունեն յաճախակի թնդանօթաձուլութիւններ, որոնց իսկական բնաւորութիւնը սակայն պարզված չէ որոշ կերպով մինչև այժմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

III

Նախորդ յօդուածներում մենք ասեցինք, որ խաչիկ վարդապետի պեղումների մասին խօսողները ուշագրութիւն դարձրել են միայն Ձուարթնոց եկեղեցու վրա և զբաղվել են նրա ճարտարապետական հնագիտական շինութեան ժամանակի հարցերով:

Այդ հետազոտութիւններից մենք կը յիշատակենք Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանի «Раскопки развалин церкви св. Григория» աշխատութիւնը, որ տպագրվեց Պետրբուրգի Կայսերական Հնագիտական Յանձնաժողովի պաշտօնական հրատարակութեան մէջ և այժմ տպագրված է առանձին գրքով: Աշխատութիւնը բաղկացած է 48 մեծադիր ութանիւթ երեսներից և ունի 20 առանձին թերթերի վրա շատ գեղեցիկ տպված նկար-

ածխահանքեր գործողութեան մէջ: Ընկերական անտեսութեան բաժինը յատկացուած է դաստիարակութեան պալատին մէջ, որը նկարագրած ենք նախորդ յօդուածով մը. այս բաժնին մէջ ներկայացուած են իւրաքանչիւր երկրներու բնական հարստութիւնները, անոնց ճարտարագործական կազմակերպութիւնները, ընկերային հարցերը, զանոնք լուծելու համար եղած ճիշդը. ինչ ի նկատի առնուած՝ են կենսի և աշխատութեան պայմաններու մէջ մարդուն ունեցած առնչութիւնները իր նմանին և բնդհանուր ընկերութեան հետ: Ցոյց դրուած են նաև զանազան ազգերու ներկայի կերպերը, հանքերու, տարագործութիւններու և ընդհանուր աշխատութիւններու կարգադրութիւնները և հսկողութիւնները, ճարտարագործական վիճաբանութիւններու և անոնց հաստատութիւններու կարեւորութիւնները, անգործներու հարցը, աշխատութեան արժէքը և անոր վարձատրութեան կերպերը, գործակցութիւնը, շահի աւելումը, անային և գիւղատնտեսական հարցեր, ողորմութիւնը, պատիժներու հարցերը և այլն ի նկատի առնուած են նմանապէս:

Մարդաբանական և ազգագրութեան շէնքի մեծութիւնն է 663-ով 113 ոտք, ծախսուած է 115,000 զօլլար: Այս բաժնին մէջ ցոյց դրուած են մարդկային ցեղի ֆիզիքական յատկորոշութիւնները, նմանութիւնները և տարբերութիւնները. երկրիս պատմութեան զանազան շրջաններու մէջ ապրող ցեղերու և ժողովուրդներու անդամագինական բաղդատութիւնները, կրթական յառաջդիմութեան շարժումները, ինչ ցոյց դրուած են նաև գեղարուեստներու և ճարտարաբանական, կրօնական ծէսերու և արարողութիւններու, խաղերու, ընկերային սովորութիւններու և այլն: Ի ցոյց դրուած են նաև գիտութեան այս ճիւղը լուսաբանող բարձրագույն, լուսանկարներ և գրքեր, ներկայիս

ներ, որոնց մեծագոյն մասը պատկերացնում է Ձուարթնոցի աւերակները:

Սա, որքան գիտենք, առաջին լուրջ աշխատութիւնն է, որի միջոցով ողա մասնագէտները կարող են ծանօթանալ Ձուարթնոց եկեղեցու հետ: Մեսրոպ վարդապետը մանրամասն կերպով նկարագրել է պեղումների տուած հետեւանքները և հետաքրքրական տեսչեկութիւններ է տալիս հին հայկական ճարտարապետութեան մասին, հիմնովիով Ձուարթնոցի և մի բանի ուրիշ ամենահին եկեղեցիների տուած նիւթերի վրա: Ի միջի այլոց, շատ հետաքրքրական է և այն պատմական տեսութիւնը, որի մէջ էջմիածնի երկրասարդ միաբանը բացատրում է, օգտվելով հայ պատմագիրների տուած կցկտուր տեղեկութիւններից, Ձուարթնոց եկեղեցու շինութեան ժամանակը, Շինողի (Ներսէս կաթողիկոս) անձնաւորութեան և հակումների պատկերը: Եթե ներքոյ դարի պատմութիւնից վերցրած մի կտոր է դա, մի դարի, երբ յունական ազդեցութեան, քաղկեդոնական վէճերի ահագին հարց կար Հայաստանում:

Բայց Ձուարթնոց եկեղեցին միայն այդ չէ տուել մեզ: Անցեալ տարի ամառը մենք էլ տեսնեց Ուաչիկ վարդապետի պեղումները և կարող ենք ասել, որ վաղապէս միջին դուրս է հանվել ոչ միայն եկեղեցի, այլ և մեր հին ընտանեկան կիսները, մեր անային կեցութեան մի զարմանալի հարուստ պատկերը: Աւերակների կողքին շինված փոքրիկ, տախտակապատ թանգարանի մէջ դուր կը տեսնէք անային իրերի մի մեծ ժողովածու: Եւ սա, մեր կարծիքով, պակաս հետաքրքրութիւն չէ ներկայացնում բան Ներսէս Շինողի եկեղեցին:

Բաֆֆին իր «Մամուլէի» մէջ աշխատել է տալ չորրորդ դարի հայոց կեցութեան պատկերը: Բայց ճիշդան ճիշդ է դա: Դժուար չէ հասկանալ, որ հանգուցեալ վիպադրողը աւելի երևակայութեան միջոցով է նկարել այդ պատկերը: Նա ինքն էլ բոստովանում է այդ բանը

մէջ ապրող ամեն ցեղերու կենդանի օրինակներ:

Մարմնամարզական կրթութիւններու համար յատկացված շէնքի մեծութիւնն է 182-ով 94 ոտք, ասոր համար ծախսուած է 150,000 զօլլար, որուն մօտ շինված է նաև 700 ոտք երկայնութեամբ ընդարձակ հրապարակ մը բմբջամարտական արշաւի և այլ խաղերու կրթութեան համար: Այս հրապարակի շուրջը շինուած ամփիթէատը կրնայ պարունակել 25,000-էն աւելի բազմութիւն մը: Մարմնամարզական բաժնին մէջ ցոյց տրված են մարզական կրթութեանց, խաղերու և սպորտի վերաբերեալ գործիքներ, հապոստներ և հանդերձանքներ, սպորտի վերաբերեալ ամեն տեսակ առարկաներ, ցոյց դրուած են նաև անցեալ ժամանակներու մի կատարուած պատահաններու յիշատակարաններ, բմբջամարտական խաղերու և սպորտներու վերաբերեալ գիրքեր ու գրքուածքներ: Գլխաւոր 20 տեսակ խաղերու համար յատկացուած են առանձին մրցանակներ (զրամ և շքանշան): Երաժշտական բաժնին յատկացուած է նուագաւորանք մը, որը, ինչպէս նախորդ յօդուածով մը յիշեցինք, ամբողջ արուեստահանդէսին մինակ հրաշայիւնն է:

Այս բաժինը կազմակերպուած է մեծ կառուութիւն ունեցող ժողովներու և խորհրդարանների համար: Հին գետեղուած է հրաշալի երգեհօն մը, որը աշխարհիս մէջ գոյութիւն ունեցողներէն ամենէն մեծն է, ունի 140 սիւնակներ: Ձայնական և գործիական երաժշտութիւններ տեղի պիտի ունենան ինչ, ամեն օր որդեալ ժամերու մէջ: Տեղային երաժշտական խումբը բաղկացած է 90 հոգիէ. այս խումբէն զատ պիտի մասնակցեն նաև երեք օտար խումբեր, որոցմէ մին պիտի ըլլայ Պարիզի նշանաւոր garde républicaine, Լօնդօնի Grenadier կոչուած խումբը, իսկ միւսը Բելիւնի Կայսերական խումբը:

Ս. Երկայնեան

իր առաջադրանքի մէջ: Հասկանալի է և այն, որ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Որտեղ կարող էր տեսնել Րաֆֆին հին կեանքի մաս-ցորդները, որ հեղինակից կարող էր տեղե-կութիւններ բաղել, որ թանգարանը կարող էր այցելել՝ տեսնելու համար տնային իրեր, կան կարասիք, մի խօսքով այն ամենը, ինչ գործ էին ածում մեր նախահայրերը իրանց մաս-նաւոր, տնային կեանքի մէջ:

Հնագիտական պեղումները սկսում են լու-սաւորել և մեր հին տունը: Զուարթնոց եկե-ղեցին բանդիլ է մօտաւորապէս X դարի վեր-ջերում: Հետևաբար, նրա աւերակների մէջ գտնված իրերը վերաբերվում են առնուազն IX—X դարերին: Բայց բաւական է տեսնել այդ իրերը, և մենք կը համոզվենք, որ փո-փոխութիւններ մեր ընկերական և տնային կեանքի մէջ այնքան քիչ ու այնքան դանդաղ մի կատարվել, որ կարելի է այդ իրերը ա-ւելի հին կեանքի պատկանելիք էլ համարել: Պեղումները եկեղեցու մօտ բաց են արել և մի շարք սենեակներ: Դրանցից մէկը թոնրատուն է. անաղարտ մնացել է և թոնրը, որ այսօր-վայ թոնրից ոչնչով չէ դանազանվում:

Ան այդ իրերի վրա, կրկնում ենք, հար-կաւոր ուշադրութիւն ոչ որ դեռ չէ դարձրել, գոնէ մենք ոչ մի տեղ չենք տեսել նրանց մանրամասն նկարագրութիւնը, նրանց նկար-ները: Թանգարանի մէջ ձեր ուշադրութիւնը ամենից առաջ գրաւում են անագին կարաս-ները, որոնք լցված են փոշիացած կորեկով, կան և աւելի փոքր կարասներ, իսկ տնային իրերի, այն է դանազան ամանների, սարքե-րի քանակութիւնը այնքան մեծ է, որ անկա-րելի է նրանց մասին տեղեկութիւններ տալ մի փոքրիկ յօդուածում: Ձեզ դարմացում և ամեն մի իր, որ ուր չէր կարող երևակայել, որ IX—X դարերում մեր նախնիները գործ էին ածում ճիշդ այնպիսի վուշէ պարաններ, ինչպէս մենք ենք գործ ածում այսօր: Դուք կը տեսնէք, որ այն ժամանակներն էլ մեր տներում խողում էին նարդի պէս մի խաղ, գոնէ այնպէս է վկայում ոսկորէ «զառը», որի վրա նկարված են փոքրիկ շրջագծեր, ինչպէս այժման նարդի «զառերի» կամ դո-մինոի քարերի վրա:

Եւ այսպէս մի շարք յայտնութիւններ, ու-րոնք անգին նիւթեր պիտի դառնան մեր հին կեանքը ուսումնասիրողների, մեր ապագայ Րաֆֆիների համար:

Յայտնի հայագէտ պրոֆեսոր Մառը խաչիկ վարդապետի մօտ գտնվող այցելուների մա-տանի մէջ գրել է, որ շատ անգամ բրիչի մի հարուածը աւելի շատ բան է տալիս անցեա-լից, քան հետազոտութիւնների ամբողջ հա-տուցները:

Եւ յարգելի գիտնականի այս խօսքերը միան-գամայն ճիշդ են այն գեղեցիկ գիւտերի մօտ, որ տուել են Զուարթնոց եկեղեցու պեղում-ները:

Լ.

ԴՐԱՄԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՐ

Կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան ժամը 11/2-ին, կայացաւ հայոց Դրամատիկական ըն-կերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, մասնակցութեամբ մօտ 30 անդամների, նա-խագահութեամբ Հ. Առաքելյանի և քարտու-ղարութեամբ Գ. Վանցեանի:

Նախորդ ժողովի արձանագրութիւնը կար-գալուց և վաւերացնելուց յետոյ, ժողովը յար-գեց, որքէ կանգնելով, հանգուցեալ Ի. Ե. Փի-թօսով և հանգուցեալ Շալամանի յիշատակը, ապա նախագահ յայտնեց, որ օրակարգի ա-ռաջին խնդիրը լինելու է պատուաւոր անդա-մների ընտրութիւն: Անդամներից մի քանիսը հարց բարձրացրին, արդեօք ներկայ ժողովը ձեռնհաս է պատուաւոր անդամի ընտրութիւն կատարելու, քանի որ կանոնադրութեան § 17-ի մէջ պարզ ասված է, որ պատուաւոր անդամի ընտրութիւնը կատարվում է ընկե-րութեան բոլոր անդամների 2/3-ականով: Դրա դէմ ուրիշ անդամներ առաջարկում էին, որ կա-նոնադրութեան § 15-ի համաձայն, ժողովը միանգամայն ձեռնհաս է կատարելու պատուա-ւոր անդամի ընտրութիւն: Այդ առիթով տեղի ունեցան վիճաբանութիւններ, յայտնվեցին թեր և դէմ կարծիքներ: Ի վերջոյ նախագահը յայտնեց, թէ սովորաբար, երբ կանոնադրու-թեան որ և է կէտի բացատրութեան վերա-բերմամբ նորաքաջայնութիւն է ծագում, այդ տարաձայնութիւնը լուծվում է նախագահա-կան իրաւունքով, սակայն նա, նախագահը, որ անձամբ այն կարծիքի է, թէ ներկայ ժողովը ձեռնհաս է կատարելու պատուաւոր անդամի

ընտրութիւն, կանոնադրութեան § 15-ի դո-րութեամբ, չէ կամենում օգտվել իր նախա-գահական իրաւունքով և խնդրի լուծումը թողնում է ժողովի բարենայեցողութեան: Ձայ-ների բազմութեամբ ժողովը որոշեց յետաձգել պատուաւոր անդամների ընտրութիւնը:

Ժողովը ապա անցաւ առաջիկայ թատրոնա-կան սէզզիի համար վարչութեան կազմած նա-խահաշի քննութեան: Նախ քան նախահաշի-ընկելը, վարչութեան անդամ-գանձապահ պ. Ա. Սաթիսեանը ի դիտութիւն ընդհանուր ժողովի յայտնեց հետևեալ թւանշանական տե-ղեկութիւնները ընկերութեան ելնմտական վի-ճակի մասին: Անցեալ սէզզիից, ինչպէս յայտ-նի է, գոյացել էր դէֆիցիտ 7200 բութի: Սէ-զզիի փակումից յետոյ, այն է՝ վերջին մի քա-նի ամիսների ընթացքում վարչութիւնը, գոր-ծակցութեամբ վերջին ընդհանուր ժողովի կող-մից ընտրված մի քանի աշակից անդամների, հաւաքել է 5200 բութի այդ դէֆիցիտը ծած-կելու համար. այդ գումարից 1000 բութի նուիրել է պ. Ա. Մանթաշեան, 1000 բ. պ. Տիրբան Աֆրիկեան, 500 բ. Փիթօսով և ընկ. գրասենեակը, 300 բ. պ. Մ. Արամեան, 600 բ. գոյացել է «Ճանճի մէջ» պիւնայի ներկայա-ցումից և այն: Այդ 5200 բութի գումարից վարչութիւնը վճարել է 900 բ. պարտք, լրաց-րել է 3000 բութի տիւրի Մակարեանի ֆոն-դը, իսկ մնացած 1300 բ. մտցրել է նախա-հաշի մէջ: Բացի այդ 5200 բութուց, վար-չութիւնը յայտնեց յետոյ ունի ստանալ դեռ մօտ 2000 բ. և մինչև այս տարվայ վերջը կամ առաջիկայ յունվար ամիսը, երբ պէտք է սկսվեն ներկա-յացումները, ծածկել դէֆիցիտը: Ժողովական-ների կողմից դիտողութիւն արվեց, որ վար-չութիւնը պարտաւոր է լրացնել նաև անձեռն-մխելի ֆոնդը, և նախկին դրամատիկական ակմիի գումարը. այդ առիթով մի քանի ան-դամներ սկսեցին խիստ ընդադառնել վարչու-թեան գործունէութիւնը. նրանք գտնում էին, որ վարչութիւնը բաւականաչափ եռանդ և ջանք գործ չէ դնում ընկերութեան գործերի վերաբերմամբ: Դրա դէմ վարչութեան անդա-մներ և, մանաւանդ Ա. Սաթիսեան յայտա-րարեցին, որ վարչութիւնը կատարում է իր պարտքը բարեկամօրէն և ցաւում է, որ ընդ-հանուր ժողովը, փոխանակ խրախուսելու, ա-ջակցելու վարչութեան, դատաւիտում է նրան: Ժողովը գոհացաւ վարչութեան տուած բա-ցատրութիւններով և անցաւ նախահաշի ըն-նութեան:

Նախահաշիի ծրագրից երևաց, որ վարչու-թիւնը որոշել է թատրոնական կանոնաւոր ներկայացումները սկսել միայն առաջիկայ յունվարից, որովհետև մինչև յունվար ամիսը (սեպտեմբերից—դեկտեմբեր) հայոց դրամա-տիկական խումբը ներկայացումներ է տալու Բագում: Յունվարից սկսած մինչև մեծ պատը արվելու են Արտիստիկական ընկերութեան թատրոնում 16 ներկայացումներ, և այդ ժամա-նակ ամեն մի ներկայացման համար թատրոնին արվելու է վարձ 325 բութի, իսկ մեծ պատի ընթացքում արվելու են 8 ներկայացումներ 225 բ. վարձաւով թատրոնին: Ընդամենը արվելու են 24 ներկայացումներ, որոնց հա-մար ծախք կը գնայ 14,260 բութի, իսկ եկա-մուն կը լինի 11,400 բութի, այնպէս որ դէ-ֆիցիտ կը լինի մօտ 3000—3500 բութի:

Ընդհանուր ժողովը հաստատեց նախահա-շիւր և իր կողմից որոշեց ծախքի մէջ նշա-նակված 1200 բ., որ յատկացված է հեղինակ-ների և թարգմանիչների վարձատրութեան, աւելացնել 300 բութով և դարձնել 1500 բ. այն պայմանով, որ այդ 300 բ. արվի թարգ-մանութիւնները լաւ ուղղելու համար: Այդ-պիսով դէֆիցիտը կը լինի մօտ 3800 բութի:

Ժողովը փակվեց ժամը 11/2-ին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ներկայումս Անդրկովկասում է գտնվում պրոֆեսոր Մարր, որ պէտք է ամառվայ ա-միսներին ընթացքում հետազոտութիւններ անէ մեր երկրում: Մարր ամբողջ յունիս ամիսը կանգնացնէ Անիում և կը կատարէ պեղումներ և ուսումնասիրութիւններ: Նա դիտաւորու-թիւն ունի իրագործել իր նախկին ցանկու-թիւններից մէկը—շինել տալ Անիում մի պա-հեստաւուն, որտեղ պատասպարան գտնեն Անիի շրջանում գտնված այնպիսի հուրիւն-ները, որոնք առանց պաշտպանութեան կարող են գողացվել և փշաւալ: Անիից յետոյ Մարր կուղևորվի Զօրօխի հովիտը՝ ուսումնասիրելու Կլարշիտի շրջանը: Այդ ուսումնասիրութիւնը կը խլէ ամիս ու կէս ժամանակ: Այնուհետև

Մարր մի երկու շաբաթ էլ կը պարապվի ու-սումնասիրութիւններով Թիֆլիսում:

Այս տարի Գէորգեան ձեռնարանից աւար-տեցին կից հոգի: Երևանի թեմական դպրա-նոցից 19 հոգի, որոնցից հինգը Շուշու դըպ-րոցից էին, իսկ մէկը կողմնակի անձնաւորու-թիւն: Ուսուցչական սիմֆոնիայից աւարտե-ցին 12 հոգի, որոնցից 8 հոգի ուսու, 3 հոգի հայեր և մէկ հոգի պարսիկ:

Կիրակի, մայիսի 30-ին հայ թատերասէրե-րի մշտական խումբը մասնակցութեամբ Վան-շիւրի, խաղաց «Սխալ հաշիւ» կօմիդիա 4 գործողութեամբ Երեւանի և «Վալ իմ կորած յիսուն ոսկի» վօդ. 1 գործ. հ. Արաքիւսեանի: Կօմիդիան անցաւ ընդհանրապէս աշուղ. բնո-րոշ էին իրանց դերերում Վանշիւր, սի-րոզներ՝ պ. Գալստեան, Լաշարեան՝ իր փոքրիկ դերում և տ. Սօփիա: Իրանց աշխոյժ խաղով պ. Սարեան և օր. Բէգիշեանն մեծ դուարձութիւն պատճառեցին հանդիսականնե-րին: Վօդիլին անցաւ ուրախ շնորհիւ Սարեա-նի և Բէգիշեանների. միւս սիւրողները պահ-պանում էին ընդհանուր անսամբը: Հասարա-կութիւնը զոհ սրտով ցրվեց:

Հին-Նախիվեանից հեռագրում են «Է. Բ. Բ.»-ին, որ մայիսի 30-ին այնտեղ կառավարութեան, ուղղափառ, լուսաւորչական և մանկեղանկան հոգևորականութեան ներկայացուցիչների, ին-տեղիզիցիայի և անագին ամբոխի ներկայու-թեամբ օրհնվել և բացվել է տեղական քաղա-քային դպրոցին կից՝ նուիրատուութիւններով կառուցված՝ շերամապահական բաժանմունքը: Դպրոցի տեսուչ Տօպուրեան ձառ է խօսել և շնորհակալութիւն է յայտնել տեղացիներին նրանց առած առատ նուէրների համար: Ժո-ղովուրդը ծանօթանում է շերամի որթիքին կերակրելու եղանակի հետ:

Թիֆլիսի Անճում ընկերութիւնը սկսել է սալայատակել կատարելագործված ձեով՝ Մի-բայէլեան փողոցի մի մասը:

Ներկայ յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ պարապմունքները կը սկսվեն առաւօտեան ժամը 9-ին և կը վերջանան ժամը 2-ին:

Շուշուի պէտք է ունենայ բէալական դըպ-րոցի սեփական շէնք. պ. Արաքիւսեանը նուի-րել էր դրա համար 100 հազար չափ մի գու-մար: Ծագեց կապալաւու Մահմետի Յակո-բեանի խնդրից, որի մասին իր ժամանակին «Մշակում» տպագրվեցին բաւական երկար մանրամասնութիւններ: Յետոյ յանձն առաւ կառուցանել խնդիրը Տէր-Կարապետեանը: Հիմքն արդէն պատրաստ էր, պատերն արդէն սկսել էին բարձրանալ... Բայց նորից այդ դժբաղդ շէնքի շուրջը ինտրիգներ ու թիւր-իմացութիւններ են ծագել: Այժմ լսում ենք, որ պ. Արաքիւսեան, ձանձարացած այնքան ձգձգումներից ու անհամութիւններից, վճռել է իր խոստացած գումարը (որ կարծես աճել և հասել է 115,000-ի) յանձնել քաղաքային վար-չութեանը, որ այսուհետև ևս առաջ տանէ շինութեան գործը: Յոյս ունենք, որ Շուշուի օրինակ կառնէ թէ Թիֆլիսի և թէ այլ տեղե-րի փորձից: Այդպիսի դէպքերում իսկոյն կազմվում է քաղաքային վարչութիւնից մի յանձնաժողով, որի մէջ մտնում են կառուցվող դպրոցի դիրեկտորը և նրա ընտրած մէկ եր-կու վստահելի անձերը, և շինութեան գործը յանձնվում է նրանց: Այժմ պէտք է «չստ բաց անել», որովհետև Շուշում ունեւոր ախոր-ժակը շատ աւելի գորել է, քան Կովկասի որ և է ուրիշ քաղաքում:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Այսօր, մայիսի 23-ին, կայացաւ տեղիս եկեղեցական խորհրդի ընդհանուր ժողովը, որը կոչված էր ընտրել խորհրդի երկու անդամ և երեցիփոխ եկեղեցու համար: Ձայների մեծամասնութեամբ ընտրվե-լիւով խորհրդին՝ եկեղեցական խորհրդի 2 անդամներ՝ Մ. Պօպովեան և Ա. Տէր-Միկա-չեան, իսկ երեցիփոխ ընտրվեց (20 ձ.) պ. Ստեփան Պօպովեան: Ներկայ էին ընդամենը 36 ծխականներ»:

ՇԱՄԱՆՈՒՑ մեզ գրում են. «Երկարատե անձրևներից յետոյ սկսվել են գարնանային եղանակներ: Ամառանոց եկողների սեզոնը բացվել է. այժմ մեզ մօտ բաւական հիւրեր կան Բաղուրից ու Դերբենդից. բնակարանների պակասութիւն է զգացվում: Հայոց խումբը

պատրաստվել է այս ամառվայ ընթացքում մի քանի ներկայացումներ տալու»:

Հագախի գաւառի ԲԱՂԱՆԻՍ գիւղից մեզ գրում են. «Մարտ ամսի սկզբից ամեն օր անձրև է գալիս: Սարսափելի էր ապրիլի 20-ին եկած անձրևը, որը սկսվեց երեկոյեան ժամը 7-ից և տեղեց մինչև 11 ժամը: Նոյն ամսի 29-ին եկաւ կարկուտ սարերում, իսկ մայիսի 5, 15 և 16-ին սաստիկ ձիւն, որից գիւղացիները ստիպված էին տաւարը նորից գոմերը բերել: Անձրևը գիւղացիներին աշխա-տանքից զրկել է. ամբողջ օրով չեն կարողա-նում աշխատել, մանաւանդ մեծ հեղութիւն էին բաշում խոտի և դարմանի կողմից: Տո-րենի առատութիւն է գիւղերում. թաղարը ծախվում է 7 բութի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԵՍԻՍԱՅԻ ՇՈՒՐՁԸ

Պօր-Արտաքի մասին տեղեկութիւններ: «Daily News» լրագիրը հրատարակել է Պետերբուր-գից ստացված մի նամակ, որ գրել է Պօր-Արտաքի հրամանատար գեներալ-լէյտենանտ Ստեփան իր բարեկամներից մէկին. «Ես չը գիտեմ, կը տեսնվենք իրար հետ երբ և իցէ. արդեօք կը ստանամ ես կարգադրութիւն, թէ ոչ, բայց իմ վիճիս որոշ է. ես տուել եմ կեանքս Ռուսաստանին և ինչ որ պատահելու լինի, ես անձաւատու չեմ լինի: Պօր-Ար-տաքը իմ գերեզմանս կը դառնայ» (P. Ա.):

—Ընդհանի շատ լրագիրներ նկատում են, որ երկրպագիները նորանոր ջանքեր են ա-նում Պօր-Արտաքի նաւահանգստի մօտը փակելու, որպէս զի ուսական նաւատորմը այն քաղէին, երբ քաղաքը կը վերցնվի, չը կարողանայ դուրս գալ բաց ծովը և կուշի երկրպագի նաւատորմի հետ, որովհետև այդ կուշի կարող է շատ վատ հետևանքներ ունե-նալ երկրպագիական ծովային ոյժերի համար: Լրագիրները չեն կասկածում, որ երկրպագի-ները կանեն Պօր-Արտաքը, որովհետև եա-պօնացիները ունեն մօտ 100,000 մարդ, իսկ ուսները պաշտպանում են Պօր-Արտաքը միայն 25,000 հոգով: Գրանք էլ իրանց թիւդա-նօթները մի մասը կը գրեցին են Յօնիշօուի կուշի ժամանակ: Պաշարումը, ի հարկէ, կը տեի բաւական երկար, որովհետև գէներալ Օ-կուն որոշել է խնայել իր զինուորների կեան-քը, բայց վերջնական կըլը անկասկած է: (C. II. Bթ.)

—«Neue Freie Presse» լրագիրը գրում է. «Պետերբուրգում, դեռ ընդհանուր հրամանատար Կուրօպատիլինի պատերազմի բեմը գնալուց առաջ, գիւղացական խորհրդի մէջ խորհրդակցու-թիւնների ժամանակ, նախատեսվեցին բոլոր հարաւոր գրութիւնները և դէպքերը, նոյն իսկ Պօր-Արտաքի պաշարումը: Որոշվեց Պօր-Արտաքը թողնել, որ ինքն իր սեփական ոյժերով պաշտպանվի: Ներկայ պայմաններում շարժվել Լեհաստանից դէպի հարաւ, նշանա-կում է ընկնել թշնամու երկու բանակների մէջտեղ—մի շատ վտանգաւոր գրութիւն: Միայն այն պայմանում, երբ ուսաց ուղարկ-ոյժերը իրանց թուով գերազանցեն երկրպա-կան ոյժերից, այդ դէպքում ևս ուսների գործը պէտք է լինէր շարդել գէներալ Կու-րօսկի բանակը: Միայն յետ քննելով նրան Եա-լու գետի միւս կողմը, ուսաց գլխաւոր ոյ-ժերը կարող էին առաջ խաղալ և գնալ Պօր-Արտաքի օգնութեան» (P. Bթ.)

—«Echo de Paris» լրագիրը Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ երկու ծայրահեղ վիճիւնների մէջ Պօր-Արտաքի վերաբերմամբ, այն է թողնել նրան իր բախտին և ցոյց տալ նրան անպատճառ օգնութիւն, ընտրված է եր-րորդ որոշումն, այն է պէտք է զգոյշ փորձել անվնաս փրկելու պաշարված բերքը: Այդ որոշման ընդունելուն նպաստեց նաւա-տորմի վիճակի մասին երկիւղը և այն թէ ուս-սական աղբեղութեան հմայքը կարող է ընկ-նել չինացիների աչքում Պօր-Արտաքի առման դէպքում: (H. Ա.)

Ինչու գնեալ Կուրօպատիլին չէ գնում Պօր-Արտաքի օգնութեան: Դրա պատճառը բա-ցատրում է «New-York Herald» թերթը այս կերպով. «Գէներալ Կուրօպատիլին չէ կարող այդ անիւ, առանց ենթարկվելու բիսկի՝ կտր-վել գլխաւոր բանակից՝ գէներալ Կուրօսկի գործից, որ կանգնած նշանաւոր ոյժերով սպասում է, թէ երբ ուսները կը գործեն այդ սխալը: Բայց գէներալ Կուրօպատիլին չափա-զանց ճարպիկ տակտիկ է այդպիսի մեծ սխալ գործելու համար» (H. Ա.)

